Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2021-2022 ուստարի)

10-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

***ա) Հայոց պատմություն** (20 **միավոր**)*

1. Որտեղի՞ց է սկիզբ առնում Արևմտյան Տիգրիսը. 0,5 մ.
   ա) Ծովք լճից բ) Ծաղկանց լեռներից գ) Հայկական Տավրոսից դ) Ծաղկավետ լեռներից
2. Ո՞ր ժամանակաշրջանին է վերաբերում Պորտաբլուր հնավայրը. 0,5 մ.
   ա) Ք.ա. XI հազարամյակի առաջին կես բ) Ք.ա. XI հազարամյակի երկրորդ կես
   գ) Ք.ա. X հազարամյակի կեսեր դ) Ք.ա. IX հազարամյակի կեսեր
3. Որքա՞ն էր հայոց բանակի հետևակի թիվը Հայկազուն-Երվանդականների օրոք. 0,5 մ.
   ա) 48 հազար բ) 58 հազար գ) 40 հազար դ) 50 հազար
4. Ո՞վ էր Ռուսա I-ի որդին և հաջորդը. 0,5 մ.
   ա) Ռուսա II բ) Արգիշտի II գ) Սարդուրի III դ) Սարդուրի II
5. Սեպագիր աղբյուրներում հիշատակվող ո՞ր պետական կազմավորմանն է համապատասխանում Հայկազունների իշխանությունը. 0,5 մ.
   ա) Ուրմե բ) Արդինի-Մուսասիր գ) Արմե-Շուբրիա դ) Ալզի
6. Ո՞ր արքայատոհմից էր Զենոն-Արտաշեսը. 0,5 մ.
   ա) սելևկյան բ) պոնտական գ) մարական դ) պարթևական
7. Ովքե՞ր էին առաջնորդում Աքեմենյան զորքի աջ թևը Գավգամելայի ճակատամարտում. 0,5 մ.
   ա) Արտաշեսը և Զարեհը բ) Երվանդ II-ը և Միթրաուստեսը
   գ) Երվանդ IV-ը և Զարեհը դ) Երվանդ III-ը և Միթրաուստեսը
8. Հայ պատմիչներն ո՞ւմ են անվանում կարգ ու կանոնի բարեպաշտ առաջնորդ. 0,5 մ.
   ա) Համազասպ Մամիկոնյան բ) Գրիգոր Մամիկոնյան
   գ) Աշոտ Բագրատունի դ) Ներսեհ Կամսարական
9. Ե՞րբ է գահակալել Արշակ III-ը: 0,5 մ.
10. Ո՞ւմ գլխավորած ժողովն է Գրիգոր Լուսավորչին ձեռնադրել եպիսկոպոս: 0,5 մ.
11. Պապ թագավորի օրոք Հայոց ո՞ր կաթողիկոսի ձեռնադրմամբ է հաստատվում Հայոց կաթողիկոսական աթոռի սկզբնական ինքնուրույնությունը: 0,5 մ.
12. Ո՞ր գավառում էր գտնվում Արծափ ամրոցը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
    ա. արաբների ջախջախումը «Արյան լիճ» կոչվող վայրում
    բ. հայոց այրուձիի բանակելը Վարդանակերտում
    գ. Սասուն գավառի միանալը Արմինիային
    դ. Մուշեղ Մամիկոնյանի ամրանալը Արտագերսում
    ե. Գուկանք գյուղի մոտ արաբների ջախջախումը
    զ. արաբ զորավար Յուսուֆին մահապատժի ենթարկելը սասունցիների կողմից
    է. Սահակ Ձորոփորցի կաթողիկոսի նամակը արաբ հրամանատարին
    ը. Քթիշ ամրոցի պաշտպանությունը

1	2	3	4	5	6	7	8

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
    1. Կոգովիտ
    2. Ծոփք
    3. Բագրևանդ
    4. Եկեղյաց գավառ
    5. Դերջան
    6. Դարանաղյաց գավառ
    ա. Բնաբեղ բ. Բագավան գ. Դարույնք
    դ. Անի ե. Երզնկա զ. Բագառիճ

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
    ա) Տիգրան Մեծի և Միհրդատ Եվպատորի միջև կնքված հայ-պոնտական պայմանագրի համաձայն՝ կողմերը միացյալ ուժերով հարձակվելու էին Կապադովկիայի վրա, որի տարածքը պետք է ստանար Պոնտոսը, իսկ շարժական գույքն ու բնակչությունը՝ Մեծ Հայքը:
    բ) Հռոմի դեմ Տիգրան Մեծի պատերազմելու դեպքում Միհրդատ Եվպատորը խոստանում էր պահպանել

չեզոքություն:
գ) Հռոմի դեմ պատերազմում Տիգրան Մեծից զորք ստանալու դիմաց Պոնտոսը համաձայնում էր Փոքր Հայքը զիջել Հայոց թագավորությանը:
դ) Հայկական հելլենիզմի պատմությունն ընդունված է բաժանել երեք փուլի՝ հին, միջին և նոր:
ե) Հայկական կամ Արևելյան Տավրոսի լեռնաշղթայում գտնվող Նեմրութ լեռան սրբավայրը կառուցել է Անտիոքոս I Երվանդունին:
զ) Անտիոքոս I Երվանդունին թագադրվել է Տիգրան Մեծի կողմից «Տիգրանյան» կամ «Արտաշեսյան» թագով:
է) Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրում միահյուսվել են հայկական և մերձավորարևելյան ճարտարապետության լավագույն ավանդույթները:
ը) Զրադաշտականությունը դուալիստական (երկմիասնական) կրոն էր, որի հետևորդները հավատում էին, որ գոյություն ունեն երկու համազոր գերագույն աստվածներ՝ բարի և չար:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)
ա) *Ֆետիշիզմ* –– հավատ գերբնական ուժերի միջոցով նյութական առարկաների, երևույթների և անձանց վրա ազդելու մարդու ունակության նկատմամբ:
բ) *Մոգություն* – հավատ անշունչ առարկաների՝ ծառերի, ժայռերի, քարանձավների, պաշտամունքային հատուկ պատրաստված իրերի գերբնական հատկությունների նկատմամբ:
գ) *Շահաստան* – միջնադարյան քաղաքի՝ առանձին պարսպով շրջապատված միջնաբերդը:
դ) *Մուհթասիբ* – հարկահանությանը, շուկաներին, առևտրին, արհեստներին հետևող հատուկ պաշտոնյա միջնադարյան քաղաքում:
ե) *Անդրկովկասյան կոմիսարիատ* – 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված իշխանության մարմին:
զ) *Անդրկովկասյան հատուկ կոմիտե (ՕԶԱԿոմ)* – 1917 թ. հեղինակազրկված Անդրկովկասյան կոմիսարիատի փոխարեն ստեղծված իշխանության նոր մարմին:
է) *Պարենմասնատրում* – Ռազմական կոմունիզմի քաղաքականության շրջանակներում կիրառվող հարկերի գանձման կարգ, որի դեպքում բռնագրավվում էր բնակչության, առաջին հերթին՝ գյուղացիության, եկամտի և ունեցվածքի ամբողջ ավելցուկը:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) 313 թ. Կոստանդիանոս Մեծ կայսեր համաձայնությամբ ընդունվել է Միլանի հրովարտակը, որով քրիստոնեությունը Հռոմեական կայսրությունում հռչակվեց որպես միակ ճշմարիտ կրոն:
բ) Խոսրով Կոտակը օրենք է սահմանել, ըստ որի՝ աշխարհատեր նախարարները պետք է մնային թագավորի մոտ, և նրանցից ոչ ոք չպետք է մարտի գնար արքունի զորքի հետ:
գ) Տիրանի օրոք մեծ կորուստներ են կրել Ռշտունյաց և Բզնունյաց տոհմերը, իսկ հայոց զորքերի հրամանատարներ Արտավազդ և Մուշեղ Մամիկոնյանները հեռացել են իրենց տոհմական աշխարհը՝ Տայք:
դ) Արշակ 2-րդի օրոք՝ 359 թ., պատերազմ է սկսվել Հռոմի և Պարսկաստանի միջև:
ե) Պապ թագավորը պատգամավորներ է ուղարկում կայսեր մոտ՝ տարածքային պահանջներով, որին Վաղես կայսրը, որն այդ ժամանակ Կիլիկիայի Տարսոն քաղաքում էր, պատասխանում է դավադրությամբ:
զ) Սպարապետ Մանվել Մամիկոնյանը Արշակ 3-րդին ամուսնացնում է իր դստեր՝ Վարազդուխտի հետ:
է) Վռամշապուհ արքայի հետ խորհրդակցելով՝ Սահակ Պարթևը մեկնում է պարսից արքունիք և ստանում Վռամ 4-րդի համաձայնությունը Արտավազդ Մամիկոնյանին՝ Սահակ Պարթևի դստեր՝ Սահականույշի ամուսնուն, հայոց սպարապետ նշանակելու մասին:
ը) 428 թ. Վռամ 5-րդը հրամայում է թագավորությունը վերցնել Արտաշեսից և նրան արգելափակել Պարսկաստանում, իսկ Սահակ Պարթևին զրկել կաթողիկոսությունից, ու նրա փոխարեն եպիսկոպոսության աթոռը տալ Սուրմակին:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)

Տիգրան Մեծի կյանքին է նվիրված եղել Մեթոդորոս Սկեպսացու «Մեծ մարդկանց մասին» վերնագրով աշխատության մի ամբողջ գլուխ:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

«Նա քաղաքը շրջապատեց ... պարսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»:

ա. Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերումը:

բ. Ո՞ր քաղաքի մասին է խոսքը:

գ. Որքա՞ն էր պարսպի բարձրությունը՝ ըստ պատմիչի:

20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

Ավարայրի ճակատամարտից հետո հայ նախարարներից շատերն ամրացել էին Միջնաշխարհի, Տմորիքի, …-ի (1), Ուտիքի ամրոցներում և շարունակում էին պայքարը: … թ. (2) հեռավոր աքսորում նահատակվում են … … (3) կաթողիկոսը, Ղևոնդ երեցը և ուրիշներ:

21. Տրամաբանական խնդիր. 1 մ.

Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 5200 տարեկան է, ո՞ր ժամանակաշրջանի ընթացքում է ստեղծվել (նշե՛ք կոնկրետ անվանումը):

22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:

բ. Ո՞ր լճի ջրերն են ողողում նրա արևելյան սահմանների ափերը:

23. Ովքե՞ր են պատկերված Գրիգոր Խանջյանի այս նշանավոր կտավում. 0,5 մ.

24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)
ա. Ո՞ր վեհաժողովն է պատկերված ծաղրանկարում (նշե՛ք թվականը և վայրը):
բ. Ո՞ր պետությանն է խորհրդանշում ձախ կողմում պատկերված առյուծը:

A "HAPPY FAMILY" AT BERLIN.

բ) Համաշխարհային պատմություն (10 միավոր)

1. Ո՞ր փարավոնի կառավարմամբ է սկսվել Եգիպտոսի պատմության Նոր թագավորության դարաշրջանը.
ա) Ամենհոտեպ IV բ) Թութմոս III գ) Յահմոս I դ) Ռամզես II 0,5 մ.
2. Ո՞ր պետության կործանումից հետո է Առաջավոր Ասիայում սկսվել նորբաբելոնյան գերիշխանության դարաշրջանը. 0,5 մ.
ա) Ասորեստանի բ) Մարաստանի գ) Էլամի դ) Հուդայի թագավորության
3. Կլիսթենեսի օրոք Ատտիկան բաժանվել է վարչական երեք շրջանների, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում էր 10 մասերի. դրանք կոչվում էին՝ 0,5 մ.
ա) ֆիլ բ) տրիտիա գ) բուլե դ) դեմոս
4. Էտրուսկյան ո՞ր քաղաքի գրավումով է ավարտվել Իտալիայի նվաճումը Հռոմի կողմից. 0,5 մ.
ա) Տարենտում բ) Բենեվենտում գ) Վոլսինիում դ) Մեդիոլանում
5. Ո՞վ էր Պարթևստանի վերջին արքան, որ սպանվել է Սասանի որդի Արտաշիրի բարձրացրած ապստամբության ընթացքում. 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք արքաների անունները և նրանց կառավարման տարեթվերը. 1 մ. (4 X 0,25 մ.)
1. Աշոկա
2. Ցին Շի Հուանդի
3. Ու Դի
4. Միհրդատ I

1	2	3	4

ա. Ք.ա. 140-87 թթ. բ. Ք.ա. 171-138 թթ. գ. Ք.ա. 246-210 թթ. դ. Ք.ա. 268-231 թթ.
7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
ա) Ք.ա. 510 թ. Հռոմի բնակչությունն ապստամբել է և քաղաքից վտարել Հռոմի վերջին արքա Սերվիոս Տուլիոսին:
բ) Դիոկղետիանոսի օրոք Հռոմեական կայսրությունում հիմք է դրվել կառավարման նոր եղանակին, որը ստացել է դոմինատ անվանումը (լատին.՝ «տեր» բառից):
գ) 325 թ. Դիոկղետիանոս կայսեր հովանավորությանբ Նիկիայում հրավիրվել է քրիստոնեական եկեղեցու առաջին տիեզերական ժողովը:
դ) 732 թ. մայորդոմ Պիպին Կարճահասակը Սուասոն քաղաքում հռչակվել է ֆրանկների թագավոր:
ե) Պիպին Կարճահասակի թագադրությամբ Ֆրանկական պետությունում իշխանությունն անցել է Կարոլինգների արքայատանը:
զ) 1202 թ. խաչակիրները գրավել են Դալմաթիայի ափին գտնվող Զադար քաղաքը, որով սկսվել է խաչակրաց չորրորդ արշավանքը (1202-1204 թթ.):
է) Մոնղոլական աշխարհակալ տերությունը բաժանված էր հինգ ուլուսների. Իրանը, Իրաքը, Հայաստանը, Կովկասը և Միջին Ասիան մտնում էին չորրորդ ուլուսի մեջ, որի մայրաքաղաքը Թավրիզն էր:

1	2	3

8. Թվարկե՛ք՝ 2 մ. (4 X 0,5 մ.)
ա. Ֆրանչեսկո Պետրարկայի գաղափարները շարունակող ստեղծագործողներից 2-ին,
բ. Խաչակրաց հոգևոր-ասպետական միաբանություններից 2-ը Արևելյան Միջերկրածովում:

9. Աշխատանք քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)

ա. Ո՞ր պետությունն է պատկերված քարտեզում:
բ. Ո՞ւմ գահակալության օրոք եղած սահմաններն են արտացոլված առավելագույն եզրագծերով:

10. Հին Արևելքի ո՞ր նշանավոր արքայի դրամն է պատկերված ստորև. 0,5 մ.

11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ. 1,5 մ. (3 X 0,5 մ.)

THE GAP IN THE BRIDGE.

ա. Ո՞ր պետությունն է խորհրդանշում աջ կողմում պատկերված անձը:
բ. Նշե՛ք այդ պետության ղեկավարի անունը և ազգանունը նշված ժամանակաշրջանում:
գ. Ի՞նչ է խորհրդանշում կամուրջը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.03.2022 թ.